



# Աստոմին® Գել

## ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

ԱՍՏՈՄԻՆ® Գելը օգնում է թեթևացնել ցավը, որը առաջանում է բերանի խոռոչի լորձաթաղանթի այնպիսի ախտահարումների հետևանքով, ինչպիսին են՝ աֆտոզ ստոմատիտը, աֆտոզ խոցերը, փոքր վերքերը, որոնք առաջացել են առամների ամրակներից և անհարմար պրոթեզներից:

### Ազդեցությունը

Աստոմին գելը պարունակում է պոլիվինիլպիրոլիդոն (PVP) և հիալուրոնաթթու, որոնք պաշտպանիչ շերտ են ստեղծում բերանի խոռոչի լորձաթաղանթի վրա, որը ծառայում է որպես մեխանիկական պատնեշ ախտահարված հատվածներում թեթևացնելով անպաշտպան նյարդային վերջավորությունների գրգռման հետևանքով առաջացած ցավը: Բաղադրության մեջ առկա հիալուրոնաթթուն և Ալոե Վերան նպաստում են վնասված հյուսվածքների բնական ապաքինմանը:

### Օգտագործման ձևը

Գելի 1 կամ 2 կաթիլ քսել բերանի խոռոչի խոցի կամ վերքի ամբողջ մակերեսով: Խուսափել վերքի հետ ապիկատորի անմիջական շփումից: Առնվազն 2 րոպե չշոշափել վերքը լեզվով, որպեսզի ձևավորվի պաշտպանիչ շերտ: Յուրաքանչյուր օգտագործումից հետո փակել կափարիչը: Լավագույն արդյունքի համար խորհուրդ է տրվում օգտագործելուց հետո առնվազն 1 ժամ չուտել և չխմել:

Օգտագործել օրական 3-4 անգամ կամ, ըստ անհրաժեշտության, ավելի հաճախ:

### Բաղադրությունը

Ջուր, պոլիվինիլպիրոլիդոն (PVP), մալտոդեքստրին, պրոպիլենգլիկոլ, PEG-40 գերչակի հիդրոգենացված յուղ, քսանտանային բուսախեժ, կալիումի սորբատ, նատրիումի բենզոատ, նատրիումի հիալուրոնատ, բուրավետիչ, բենզալկոնիումի քլորիդ, ԷԴՏԱ դինատրիումական աղ, սախարին նատրիումական աղ, դիկալիումի գլիցիրիկատ, Ալոե վերա (Aloe barbadensis):

### Ուշադրություն

Աստոմին® գելի յուրաքանչյուր պարկուճ պետք է կիրառել միայն մեկ հիվանդի համար՝ բացառելու ապիկատորի և գելի փոխադարձ աղտոտումը: Ցանկացած բաղադրիչի նկատմամբ գերզգայունություն ունեցող հիվանդներին հակացուցված է Աստոմին® գելի օգտագործումը: Հղիության դեպքում դեղամիջոցը օգտագործելուց առաջ խորհրդակցե՛ք ձեր բժշկի հետ: Բերանի խոռոչում խոցերի հաճախակի առաջացման դեպքում խորհուրդ է տրվում դիմել բժշկի:

### Նախազգուշացում և նախազգուշական միջոցներ

Չօգտագործել ախտանեղիության ժամկետի ավարտից հետո, կամ եթե պարկուճը վնասված է և կա արտահոսք: Պահպանել երեխաների համար անհասանելի վայրում: Պահել սենյակային ջերմաստիճանում, ջերմության աղբյուրներից հեռու և չսառեցնել:

### Պարունակություն

8 մլ

### Արտադրող

Ալիանս Ֆարմա Սրլ,  
Վիալե Ռեստելի 5,  
20124 Միլան, Իտալիա

### Տարածող ընկերություն

Բեռլին-Խեմի ԱԳ (ՄենարինիԳրուպ),  
Գլինիքեռ Վեգ 125,  
12489 Բեռլին, Գերմանիա